ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«15» նոյեմբերի 2016 թվականի № 111-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 20-րդ հոդվածի 2-րդ մասը, 30-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> ենթակետը, <<ԳեոՊրոՄայնինգ Գոլդ>> ՍՊԸ-ի 2016 թվականի նոյեմբերի 11-ի <<ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության 26.09.2016թ.-ի թիվ 900002 ակտը անվավեր ճանաչելու/վերացնելու/ վերաբերյալ>> վարչական բողոքը, ղեկավարվելով Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, 37,38, 69-77 հոդվածներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Վարչական վարույթ իրականացնող Մշտական հանձնաժողովի նախագահին՝

1) իրականացնել վարչական վարույթ <<ԳեոՊրոՄայնինգ Գոլդ>> ՍՊԸ-ի կողմից հարուցված՝ <<ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության 26.09.2016թ.-ի թիվ 900002 ակտը անվավեր ճանաչելու/վերացնելու/ վերաբերյալ>> վարչական բողոքի հիման վրա,

2) Մշտական հանձնաժողովի անդամներին և վարույթի մասնակիցներին տեղեկացնել հարուցված վարչական վարույթի անցկացման տեղի, օրվա և ժամի մասին,

3) ապահովել վարչական բողոքով ներկայացված փաստաթղթերի տրամադրումը հանձնաժողովի անդամներին,

4) վարչական վարույթն իրականացնել ղեկավարվելով Օրենքի պահանջների ապահովմամբ,

5) անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նիստին այլ անձի կարգավիճակով հրավիրել գործի փաստական հանգամանքների պարզաբանման նպատակով համապատասխան մասնագետի,

6) արդյունքների մասին տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

2. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ